ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/74

«30» 03. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 19-Ա և թիվ 20-Ա որոշումները:

Առդիր 2էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01
Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23» մարտի 2018 թվականի N19-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱԽԹԱՆԳ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,,,Տեղական տուրքերի և վճարների մասին՛՛ ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,համաձայն ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19- թիվ 843 և Շիրակամուտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 24-ի թիվ 2-Ն որոշումների,և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վախթանգ Երանոսյանի 2018թվականի մարտի 21-ի հայտը՝

Որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Վախթանգ Երանոսյանին /ՀՎՀՀ 81290573/ տալ ,, գ.Շիրակամուտ Հայկական փողոց , թիվ 7Ա՛՛ հասցեում գտնվող 44 քմ մակերեսով խանութում /հիմնական շինություն/, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2018 թվականի համար՝:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01
Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26» մարտի 2018 թվականի N20-Ա

06-087-0037-0009ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումից քաղվածքը.

Որոշում եմ

1.Օրենքի ուժով 06-087-0037-0009 ծածկագրի տակ 0,06953 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Ալբերտ Վոլոդյայի Զաքարյանի /ծնվ. 15.12.1965թ./, Վարդուհի Պետյայի Զաքարյանի /ծնվ. 24.03.1967թ./, Աշոտ Ալբերտի Զաքարյանի /ծնվ.03.07.1985թ./, Լենդրուշ Ալբերտի Զաքարյանի /ծնվ. 23.02.1988թ./,Վոլոդյա Ալբերտի Զաքարյանի/26.02.1992թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում , չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծում

4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Շիրակամուտ համայնք, թիվ 14 փողոց, թիվ 9 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան